ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 4
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-10/10» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԳՆՄԱՆ
ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

20-ը մայիսի 2026թ.
Ժամը 10^{10}

Ընդունել ի գիտություն, որ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-10/10» ծածկագրով ընթացակարգի հայտերի բացումն իրականացվել է 22.04.2026թ.-ին՝ Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով: Հանձնաժողովը մասնակիցների կողմից ներկայացված հայտերն ուսումնասիրելուց հետո աշխատանքները շարունակեց 18.05.2026թ.-ին:
Մասնակցում էին՝
հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ)՝
ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲՎ ՆՏԱ բաժնի գլխավոր մասնագետ Վ. Մելքոնյանը,
գնահատող՝
ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲՎ ԶԲ և ԳԿԾ ԿՍ բաժնի գլխավոր մասնագետ Ս. Գևորգյանը:
Հանձնաժողովի քարտուղար՝
ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչության ԳԿ 3-րդ բաժնի գլխավոր մասնագետ Մ. Հոխեյանը:
Բացակայում է՝ ՀՀ ԶՈՒ ԳՇ ԻԶՎ ռազմական ամրաշինության բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մանուկյանը:

«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-10/10» ծածկագրով գնանշման հարցման (ԳՀ) ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Մ. Հոխեյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած Մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-10/10» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին ըստ չափաբաժինների համապատասխանության մասին, տվյալներ բացված հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ Մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.
3. Մասնակիցների առաջարկած գները ըստ չափաբաժինների և տեղեկատվություն բանակցության վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա ըստ չափաբաժինների «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-10/10» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված մասնակիցների և այդպիսին չճանաչված մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած Մասնակիցների մասին.

(Մ. Հոխեյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար «Շինարարական նյութերի» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-10/10» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակիցների անվանումները
1	«Տիգրան Հակոբյան Հովհաննեսի» Ա/Ձ
2	«Ստրոյ Ստանդարտ» ՍՊԸ
3	«Միդաց» ՍՊԸ
4	«Նոյավան» ՍՊԸ
5	«Մետալ Գռուպ» ՍՊԸ
6	«Արմտեքստիլ» ՍՊԸ
7	«Արգաս» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

2. «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-10/10» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին ըստ չափաբաժինների համապատասխանության մասին, տվյալներ բացված հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ Մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.

(Մ. Հոխեյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.3 Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-10/10» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), բացառությամբ հետևյալ դեպքերի.

- «ՏԻԳՐԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ» ԱՁ կողմից «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-10/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին ներկայացված հայտով՝ ներկայացվել է լիազորագիր, որով վերջինս լիազորում է Մուրադ Գագիկի Շահինյանին՝ «ՏԻԳՐԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ» ԱՁ անունից մասնակցել ընթացակարգի ծածկագիրը՝ ԱՄԱԿԲ-ԳՀԱՊՁԲ-26/5 մրցույթին, սակայն Ձեր կողմից լիազորագրով նշված մրցույթի ծածկագիրը սխալ է, ուստի անհրաժեշտ է ներկայացնել ճիշտ ծածկագրով՝ այն է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-10/10», նոր լիազորագիր՝ «ՏԻԳՐԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ» ԱՁ կողմից հաստատված:

2.4 Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ 18.05.2026թ. կայացած նիստում գնահատող հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը, իսկ գնահատող հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով ծանուցեց «ՏԻԳՐԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ» ԱՁ-ին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում /19.05.2026թ./ շտկել վերը արձանագրված անհամապատասխանությունը:

2.5 20.05.2026թ.-ին կայացած նիստում գնահատող հանձնաժողովն արձանագրեց, որ սահմանված ժամկետում «ՏԻԳՐԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ» ԱՁ կողմից շտկվել են վերը արձանագրված անհամապատասխանությունը և վերջիններիս կողմից ներկայացված հայտը գնահատվեց «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-10/10» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

3. Մասնակիցների առաջարկած գները ըստ չափաբաժինների և տեղեկատվություն բանակցության վարման մասին.

(Մ. Հոխեյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության և սույն ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան ըստ չափաբաժինների գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝ համաձայն ստորև ներկայացվող Հավելված 1-ի.

Չ/Հ	Գնան առարկայի անվանումը	Քանակ	Միավորի գին	Գումարը	Հ/հ	Մասնակիցներ	Առանց ԱԱՀ	ԱԱՀ	ԱԱՀ-ով	Ընտրված մասնակից
1	Ցեմենտ	կգ	56	11,200,000	1	«Տիգրան Հակոբյան Հովհաննեսի» Ա/Ձ	8,378,333.333	1,675,666.667	10,054,000	«Տիգրան Հակոբյան Հովհաննեսի» Ա/Ձ
					2	«Ստրոյ Ստանդարտ» ՍՊԸ	9,000,000	1,800,000	10,800,000	
					3	«Միդաց» ՍՊԸ	9,000,000	1,800,000	10,800,000	
					4	«Նոյավան» ՍՊԸ	9,333,250	1,866,650	11,199,900	
2	(Մետաղական խողովակ Փ-48մմ)	մետր	888	7,992,000	1	«Մետալ Գռուպ» ՍՊԸ	7,762,500	1,552,500	9,315,000	Պայմանագիր չի կնքվում
3	Երկաթյա ապրանքներ (Ամրալար 6մմ)	կգ	249	249,000	1	«Մետալ Գռուպ» ՍՊԸ	242,500	48,500	291,000	Պայմանագիր չի կնքվում
4	Երկաթյա ապրանքներ (Ամրան պողպատե, Փ-10մմ)	կգ	264	264,000	1	«Մետալ Գռուպ» ՍՊԸ	275,000	55,000	330,000	Պայմանագիր չի կնքվում
5	Մետաղալար (Ջերմամշակված մետաղալար 2մմ)	կգ	350	350,000	1	«Մետալ Գռուպ» ՍՊԸ	317,500	63,500	381,000	Պայմանագիր չի կնքվում
6	Յուղաներկ (Ներկ բեժ)	կգ	1,000	500,000	Գնային առաջարկի բացակայություն					
7	Ներկ՝ լատեքսային (Ներկ լատեքսային)	կգ	300	120,000	Գնային առաջարկի բացակայություն					
8	բահեր (Ձյուն մաքրելու թիակ)	հատ	6,500	6,500,000	1	«Արմտեքստիլ» ՍՊԸ	5,320,000	1,064,000	6,384,000	«Արմտեքստիլ» ՍՊԸ
9	զանազան շինարարական քարեր (Քար ոտիղ կտրվածքի)	մ³	10,482.25	36,687,875	1	«Արգաս» ՍՊԸ	40,000,000		40,000,000	Պայմանագիր չի կնքվում

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված ըստ չափաբաժինների՝ գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/: Ըստ ներկայացված տվյալների՝ մասնակիցներից ԱԱՀ վճարող չէ միայն «Արգաս» ՍՊԸ-ն, իսկ մնացած մասնակիցները ԱԱՀ վճարող են:

Ըստ Հավելված 1-ով ներկայացված տվյալների որոշ չափաբաժինների մասով մասնակիցների կողմից առաջարկված գները գերազանցում էին պատվիրատուի տվյալ գնման համար պլանավորած նախահաշվային գները:

3.3 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-10/10» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում բանակցություններ չեն վարվել:

3.4 Գնահատող հանձնաժողովը որոշեց՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-10/10» ծածկագրով ընթացակարգը 6-րդ և 7-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջները՝ (ոչ մի հայտ չի ներկայացվել), իսկ ընթացակարգը գնահատող հանձնաժողովի որոշմամբ 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ և 9-րդ չափաբաժինների մասով հայտարարվեց չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ ենթակետը՝ (պայմանագիր չի կնքվում):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա ըստ չափաբաժինների «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-10/10» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված մասնակիցների և այդպիսին չճանաչված մասնակիցների որոշման մասին.

(Մ. Հոխեյան)

4.1 20.05.2026թ.-ին՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը, Armeps (www.armeps.am) համակարգում էլեկտրոնային գնահատման արդյունքում, գնահատող հանձնաժողովը որոշեց «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-10/10» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարար գնահատված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-10/10» գնանշման հարցման ընթացակարգում ըստ չափաբաժինների հայտարարել ընտրված մասնակիցներին՝ համաձայն վերը ներկայացված Հավելված 1-ի: Բավարար գնահատված մնացած մասնակիցները ճանաչվեցին այդպիսին չճանաչված մասնակիցներ՝ ըստ համապատասխան չափաբաժինների համար ներկայացրած գնային առաջարկների:

4.2 Գնահատող հանձնաժողովը որոշեց հրապարակել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-10/10» ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի արդյունքները:

4.3 Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-10/10» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել այն:

4.4 Սույն ընթացակարգում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն կիրառվում է տասնօրյա անգործության ժամկետ:

4.5 Գնահատող հանձնաժողովը որոշեց «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-10/10» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակիցներին ըստ չափաբաժինների պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածների պահանջները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

(Մ. Հոխեյան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

6. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ.

(Մ. Հոխեյան)

6.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-10/10» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ) Վ. Մելքոնյան

Գնահատող Ս. Գևորգյան

Հանձնաժողովի քարուղար՝ Մ. Հոխեյան